ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/8701/05/25
Նախագահող դատավոր՝ Ս. Հովակիմյան
Դատավորներ՝ Կ. Գևորգյան
Ա. Մկրտչյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/8701/05/25**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով Վահե Դունոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.03.2026 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Վահե Դունոյանի ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ Ծառայության 14.04.2025 թվականի թիվ 8259010510 որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վահե Դունոյանը պահանջել է վերացնել Ծառայության 14.04.2025 թվականի թիվ 8259010510 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 09.10.2025 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2026 թվականի որոշմամբ Վահե Դունոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.10.2025 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Վահե Դունոյանը (ներկայացուցիչ՝ Վլադիմիր Գաբրիելյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում երկու ենթադրյալ իրավախախտումներն էլ հայտնաբերվել են նույն օրը՝ 11.04.2025 թվականին: Այսինքն՝ արարքը կատարվել է ոչ թե վարչական իրավախախտման օբյեկտիվ կողմը նկարագրող տույժը նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում, այլ հենց՝ նույն տույժը նշանակելու օրը, և հենց նույն օրը տեղի ունեցած ենթադրյալ դեպքի համար է հայցվորը վարչական պատասխանատվության ենթարկվել երկու անգամ, ինչը չի համապատասխանում իրավախախտման փաստակազմին ներկայացվող պահանջներին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իրավախախտման փաստակազմին համապատասխանելու համար այն նվազագույն ժամանակը, որը պետք է անցներ վարչական տույժի նշանակումից հետո դա տվյալ օրվա փոփոխությունն էր, որպիսի պայմանը քննարկվող իրավիճակում բացակայել է, իսկ վարչական տույժը հայցվորի նկատմամբ կիրառվել է, չնայած օրենսդրի իմպերատիվ պահանջների առկայությանն առ այն, որ պատասխանատվությունը վրա է հասնում նույն արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ենթադրյալ իրավախախտումը կատարված լինելը հաստատված համարելու համար օրենսդիրը կարևորել է ոչ թե արձանագրության կազմման, այլ՝ ենթադրյալ իրավախախտման կատարման պահը, ըստ այդմ՝ 17.03.2026 թվականի որոշումն անօրինական ու անհիմն է, չի պարունակում բավարար փաստական տվյալներ հայցվորի կողմից ենթադրյալ իրավախախտումը 12.04.2025 թվականին կատարելը հաստատելու համար:

Գործում առկա չէ որևէ ապացույց, որն իրավաչափորեն կվկայեր հայցվորի կողմից ենթադրյալ իրավախախտումը 12.04.2025 թվականին կատարելու փաստը, հակառակը հենց վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ նշվել է, որ անձի

կողմից իրավախախտումը թույլ է տրվել 11.04.2025 թվականին, մինչդեռ Վերաքննիչ դատարանն ապացուցման գործընթացում այնպիսի սխալ է թույլ տվել, որը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծմանը:

Վերաքննիչ դատարանը թեև արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ նշվել է, որ հայցվորը 11.04.2025 թվականին ժամը 23:50-ին է թույլ տվել ենթադրյալ իրավախախտումը, այնուամենայնիվ ոչ իրավաչափ կերպով հիմք է ընդունել արձանագրության կազմման և սթափության վիճակի զննության ամսաթվերը, այն է՝ 12.04.2025 թվականը:

Միևնույն ժամանակ առկա է իրավունքի զարգացման խնդիր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի կապակցությամբ՝ պայմանավորված նշված իրավանորմի բովանդակության բացահայտմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2026 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ծառայության 11.04.2025 թվականի «Վարչական իրավախախտման գործով» թիվ 8250252031 որոշմամբ (այսուհետ՝ Առաջին որոշում) Վահե Դունոյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է 29.000 ՀՀ դրամի չափով տուգանքի և կիրառվել է 4 տուգանային միավոր **(գ.թ. 49).**

2) Ծառայության կողմից 12.04.2025 թվականին ժամը 00:23-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, ըստ որի՝ Վահե Դունոյանը ք. Երևան, Թևոսյան փողոցում **11.04.2024 թվականին՝ ժամը 23:50-ին**, տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք: Նույն արձանագրության՝ «Վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» տողում առկա է գրառում. *«քսանչորս ժամը չի անցել, իսկ խմածությունս եղել է նույն չափ, խնդրում եմ վերանայել»* և հայցվորի ստորագրությունը **(գ.թ. 46).**

3) Ծառայության 14.04.2025 թվականի «Վարչական իրավախախտման գործով» թիվ 8259010510 որոշմամբ (այսուհետ՝ Վիճարկվող որոշում) Վահե Դունոյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով **(գ.թ. 46).**

4) Ծառայության պետի 21.05.2025 թվականի թիվ 91/98/133989-25 որոշմամբ Ծառայության Վիճարկվող որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ առանց բավարարման **(գ.թ. 19-20)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 126-րդ հոդվածի 5-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, (...):

Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու և ըստ այդմ՝ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառման կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով հարկ է համարում անդրադառնալ նշված իրավանորմի բովանդակությանը և բացահայտել դրանով կարգավորվող հարաբերությունները:

Վերոգրյալով պայմանավորված՝ *Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված զանցակազմի բովանդակությանը:*

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված հիմնական հասկացությունների իմաստով՝ ոչ սթափ վիճակ է համարվում ալկոհոլային խմիչքի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ պայմանավորված՝ մարդու ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակը, որի դեպքում տրանսպորտային միջոց վարելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի երթևեկությունն արգելվում է, եթե՝ վարորդը տրանսպորտային միջոցը վարում է ոչ

սթափ վիճակում կամ հրաժարվում կամ որևէ ձևով խուսափում է սթափության վիճակի զննությունից:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 7-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարորդին արգելվում է՝ տրանսպորտային միջոցը վարել ոչ սթափ վիճակում:

Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն ալկոհոլի ազդեցության տակ է, և զանցանքը չի պարունակում նույն հոդվածի երկրորդից հինգերորդ մասերի հատկանիշները՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանիննապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 5 միավոր:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը **վարչական տույժի նշանակման օրվանից հետո**՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում՝ մեկ տարի ժամկետով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ (...) նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանելիս պարտադիր պետք է հաշվի առնել նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով այդ նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի կարգավորման համատեքստից (*տե՛ս, «ՎԱՐՈ» ՍՊԸ-ի տնօրեն Վարազդատ Ուլիխանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/11023/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.06.2022 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է «ոչ սթափ վիճակ» հասկացության բովանդակությունը՝ այն բնութագրելով որպես ալկոհոլային խմիչքի, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ պայմանավորված անձի այնպիսի ֆիզիկական և (կամ) հոգեկան վիճակ, որի պայմաններում տրանսպորտային միջոց վարելը առաջացնում է վարչական պատասխանատվություն: Միևնույն ժամանակ օրենսդիրն արգելել է տրանսպորտային միջոցի երթևեկությունը, եթե վարորդը տրանսպորտային միջոցը վարում է ոչ սթափ վիճակում կամ հրաժարվում է, կամ որևէ ձևով խուսափում է սթափության վիճակի զննությունից: Նշված կարգավորումը կանխարգելիչ բնույթ ունի և ուղղված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց չվարելու օրենքում ամրագրված պարտականությունը խախտելու համար նախատեսված հիմնական սանկցիան սահմանված է Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասում, որով

վարչական պատասխանատվություն է սահմանվում այն դեպքերի համար, երբ անձը տրանսպորտային միջոցը վարում է ոչ սթափ վիճակում՝ գտնվելով միայն ալկոհոլի ազդեցության տակ, և արարքը չի պարունակում նույն հոդվածի երկրորդից հինգերորդ մասերով նախատեսված հատկանիշները:

Միևնույն ժամանակ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում նույն արարքը կատարելու, այն է՝ ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու համար այն դեպքում, երբ այդ արարքը կատարվել է **վարչական տույժի նշանակման օրվանից հետո** մեկ տարվա ընթացքում: Այլ կերպ ասած՝ նշված նորմի կիրառման համար բավարար չէ միայն հերթական անգամ ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու փաստի հաստատումը, անհրաժեշտ պայման է նաև այն, որ տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում կրկին վարելու արարքն անձը կատարած լինի Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար **վարչական տույժ նշանակելու օրվան հաջորդող օրվանից հետո**՝ մեկ տարվա ընթացքում: Այսինքն՝ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումը բացառում է դրանով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառումն այն դեպքերում, երբ ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու փաստն արձանագրվում է նույն հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքի համար վարչական տույժ նշանակելու նույն օրվա ընթացքում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավակարգավորմամբ կարևորվում է նույն հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված արարքի համար վարչական տույժ կիրառված լինելը և վարչական տույժը **նշանակելու օրվան հաջորդող օրվանից հետո**՝ մեկ տարվա ընթացքում համանման արարքը կրկին կատարելը: Ընդ որում, Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ նշանակելուց հետո ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու փաստն արձանագրելու պարագայում նույն հոդվածի 5-րդ մասը կարող է կիրառելի լինել սկսած այդ վարչական տույժը **նշանակելու հաջորդող օրվանից՝** մեկ տարվա ընթացքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցակազմի պարտադիր տարրերն են՝

1) ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու փաստն արձանագրված լինելու հիմքով Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ կիրառված լինելը,

2) Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ **նշանակելու օրվան հաջորդող օրվանից հետո**՝ մեկ տարվա ընթացքում տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում կրկին վարելու փաստի օրենքով սահմանված կարգով արձանագրումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է քննարկվող իրավախախտման ամբողջական կազմը, ուստի Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասը չի կարող կիրառելի լինել: Ըստ այդմ՝ նշված իրավանորմի կիրառմամբ վարչական տույժ նշանակելու համար վարչական մարմինը պարտավոր է ապացուցել ոչ միայն վարորդի կողմից տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու փաստը, այլև՝ այդ արարքը նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով

վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կատարած լինելու փաստը:

Ամփոփելով վերոգրյալը և իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ Վճռաբեկ դատարանի առաքելությունը և այդ առումով Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ նշված իրավանորմով նախատեսված վարչական իրավախախտման (զանցակազմի) օբյեկտիվ կողմն առկա է, եթե.

- **տրանսպորտային միջոցն անձը վարել է ոչ սթափ վիճակում՝ միայն ալկոհոլի ազդեցության տակ,**
- **տվյալ արարքն անձը կատարել է Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ նշանակելու օրվան հաջորդող օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում:**

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործը հարուցվել է Վահե Դունոյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել Ծառայության 14.04.2025 թվականի թիվ 8259010510 որոշումը:

Դատարանը 09.10.2025 թվականի վճռով հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ *«(…) 11.04.2025 թվականի թիվ 8250252031 որոշումը հայցվորի կողմից ստացվել է 11.04.2025 թվականին, և այն ստանալու փաստով էլ մտել է ուժի մեջ, հետևաբար սույն գործով վիճարկվող որոշումը կայացնելիս եղել է ուժի մեջ (…)*

(…) վիճարկվող որոշումն ընդունելիս վարչական իրավախախտման գործի բոլոր ապացույցները պատասխանողը գնահատել է իր ներքին համոզմունքով՝ հիմնված գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ ու օբյեկտիվ հետազոտման վրա՝ դրանով ապահովելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վկայակոչված նորմերի պահանջները:

(…) 12.04.2025 թվականին ժամը 00:22:23-ին կատարված սթափության զննության ժամանակ հայցվորի մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը (հակառակը փաստող ապացույց հայցվոր կողմը չի ներկայացրել), որպիսի պայմաններում Ծառայության կողմից 14.04.2025 թվականին կայացված թիվ 8259010510 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ (…)»:

Վերաքննիչ դատարանը 17.03.2026 թվականի որոշմամբ Վահե Դունոյանի վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 09.10.2025 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ այն պատճառաբանությամբ, որ *«(…) Վերաքննիչ դատարանը, հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները և դրանք համադրելով վերոգրյալ իրավանորմերի հետ, գտնում է, որ դրանցով հաստատվում է գործի լուծման համար էական*

նշանակություն ունեցող այն փաստական հանգամանքը, որ Վահե Դունոյանը թույլ է տվել վիճարկվող որոշմամբ արձանագրված վարչական իրավախախտումը:

Մասնավորապես՝ վիճարկվող որոշման ընդունման հիմքում դրված ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության կողմից 12.04.2025 թվականի ժամը 00:23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ արձանագրվել է, որ Վահե Դունոյանը ք.Երևան, Թևոսյան փողոցում 11.04.2024 թվականին՝ ժամը 23:50-ին, վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք՝ տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում, որպիսի հանգամանքը հաստատվում է թիվ 91101092 սարքով կատարված սթափության վիճակի զննման թիվ 02521 կտրոնով, որից հետևում է, որ 12.04.2025 թվականի ժամը 00:22:23-ի դրությամբ Վահե Դունոյանի արտաշնչած օդի մեջ ալկոհոլի պարունակությունը եղել է 0,227 մգ/լ:

Ավելին՝ Վահե Դունոյանին հնարավորություն է տրվել իրեն վերագրված իրավախախտման կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու պահին բացատրություններ ներկայացնելու, խնդրո առարկա արձանագրության բովանդակության առթիվ դիտողություններ ներկայացնելու, ինչի արդյունքում, օգտվելով նման հնարավորությունից, հայցվորը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության՝ «Վարչական իրավախախտում կատարած անձի բացատրություն, դիտողությունը, ստորագրությունը» տողում կատարել է հետևյալ գրառումը. «քսանչորս ժամը չի անցել, իսկ խմածությունս եղել է նույն չափ, խնդրում եմ վերանայել»: (…)

(…) պարեկային ծառայողի համազգեստին ամրակցված տեսանկարահանող սարքի միջոցով նկարահանված տեսանյութերի ուսումնասիրությունից ևս պարզվում է, որ հայցվորը փաստացի ընդունում է, որ օգտագործել է ալկոհոլ և պարեկային ծառայողին խնդրում է չարձանագրել ոչ սթափ վիճակում գտնվելու իրավախախտումը, քանի որ կարող է զրկվել վարորդական իրավունքի վկայականից(…)

(…) հայցվորի կողմից թույլ տրված վարչական իրավախախտման փաստը հերքող որևէ ապացույց վարչական վարույթում առկա չի եղել (նման ապացույց առկա չէ նաև սույն գործում), իսկ վիճարկվող որոշման համար հիմք հանդիսացած վարչական իրավախախտման արձանագրությունը և գործի մյուս նյութերը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածով համարվում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ, որոնց համակցությամբ հաստատվում է իրավախախտման փաստը (…)»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Առաջին որոշմամբ Վահե Դունոյանը Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է 29.000 դրամի չափով տուգանքի և կիրառվել է 4 տուգանային միավոր:

Նույն օրը՝ **11.04.2024 թվականին՝ ժամը 23:50-ին** ք. Երևան, Թևոսյան փողոցում, տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու փաստը ՀՀ ՆԳՆ ոստիկանության

պարեկային ծառայությունն արձանագրել է 12.04.2025 թվականին ժամը 00:23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, որի «Վարչական իրավախախտում կատարած անձի բացատրությունը, դիտողությունը, ստորագրությունը» տողում Վահե Դունոյանը կատարել է գրառում. *«քսանչորս ժամը չի անցել, իսկ խմածությունս եղել է նույն չափ, խնդրում եմ վերանայել»* և ստորագրել է այդ գրառման դիմաց: Ընդ որում՝ 12.04.2025 թվականին ժամը 00:23-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ, ի կատարումն Օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պահանջի, որպես նորմատիվ իրավական ակտ, որը վարչական պատասխանատվություն է նախատեսում տվյալ իրավախախտման համար, վկայակոչվել է **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասը:**

Այնուհետև, սակայն, Վիճարկվող որոշմամբ Վահե Դունոյանի նկատմամբ որպես վարչական պատասխանատվություն՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից 1 տարի ժամկետով զրկում է կիրառվել **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով** նախատեսված հիմքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որն ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում և դրա ընդունման պահի դրությամբ գործող օրենքների հիման վրա (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով վերը նշված նորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: (...) ապացույցների հետազոտումը դատական ապացույցների

անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին *(տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարության աոընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով սույն գործով ստորադաս դատարանների կողմից քննարկված հիմքերին, արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը, ի թիվս այլնի, գնահատելով նաև Ծառայության կողմից 12.04.2025 թվականին՝ ժամը 00:23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, նշել է, որ Վահե Դունոյանը ք. Երևան, Թևոսյան փողոցում 11.04.2024 թվականին՝ ժամը 23:50-ին, վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք՝ տրանսպորտային միջոցը վարել է ոչ սթափ վիճակում: Ինչի արդյունքում Վերաքննիչ դատարանը գտել է, որ հաստատվում է այն փաստական հանգամանքը, որ Վահե Դունոյանը թույլ է տվել վիճարկվող որոշմամբ արձանագրված վարչական իրավախախտումը:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում արձանագրել, որ Ծառայությունը, որպես վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննող վարչական մարմին, Օրենսգրքի 275-րդ հոդվածով սահմանված կարգով չի ստուգել, թե արդյոք ճիշտ է կազմվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, ինչի հետևանքով ուշադրությունից դուրս է մնացել այն հանգամանքը, որ որպես հայցվորին վերագրվող իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ իրավական ակտ արձանագրության մեջ վկայակոչվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասը, այլ ոչ թե՝ նույն հոդվածի 5-րդ մասը, որի կիրառմամբ հետագայում կայացվել է Վիճարկվող որոշումը:

Հաջորդիվ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վահե Դունոյանը Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության Առաջին որոշմամբ, որն ընդունվել և հասցեատիրոջն է հանձնվել 11.04.2025 թվականին: Միաժամանակ, Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված իրավախախտումը Վահե Դունոյանը **կրկին կատարել է 11.04.2025 թվականին՝ ժամը 23:50-ին**, այսինքն՝

Առաջին որոշումն ընդունելու նույն օրը, այլ ոչ թե՝ այդ օրվան հաջորդող օրվանից սկսած մեկ տարվա ընթացքում:

Հետևապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վահե Դունոյանը տրանսպորտային միջոցը 11.04.2025 թվականին՝ ժամը 23:50-ին վարել է ոչ սթափ վիճակում՝ ալկոհոլի ազդեցության տակ, և նրա արարքը չի պարունակել նույն հոդվածի երկրորդից չորրորդ մասերով նախատեսված այլ որակող հատկանիշներ, սակայն, **նոր իրավախախտումը կատարվել է ոչ թե նախորդ վարչական տույժը նշանակած որոշումն ընդունելու օրվան հաջորդող օրվանից սկսած**՝ մեկ տարվա ընթացքում, այլ Առաջին որոշումն ընդունելու նույն օրը: Ընդ որում, Ծառայության կողմից 12.04.2025 թվականին՝ ժամը 00:23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ նկարագրված իրավախախտումը, ըստ նույն արձանագրության, կատարվել է 11.04.2024 թվականին՝ ժամը 23:50-ին, հետևաբար հաշվի առնելով, որ վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթում՝ պատասխանատվությունը սահմանող նորմը կիրառելիս էական է ոչ թե այն հանգամանքը, թե վարչական իրավախախտումը երբ է արձանագրվել, այլ այն հանգամանքը, թե վարչական իրավախախտումը երբ է կատարվել՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը Վահե Դունոյանի արարքին տվել է սխալ որակում, քանզի հիմք է ընդունել ոչ թե իրավախախտման կատարման պահը, այլ՝ արձանագրության կազմման օրը, որն իրավաչափ չէ:

Վերոնշյալ պայմաններում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Ծառայության կողմից 12.04.2025 թվականին՝ ժամը 00:23-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ նկարագրված արարքի համար Վահե Դունոյանը պետք է վարչական պատասխանատվության ենթարկվեր ոչ թե Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով, այլ նույն հոդվածի 1-ին մասով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի փաստարկն առ այն, որ Վահե Դունոյանը թույլ է տվել վիճարկվող որոշմամբ արձանագրված վարչական իրավախախտումը, քանի որ վերջինիս վերագրվող արարքը չի համապատասխանել Օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավախախտմանը, մասնավորապես՝ իրավախախտումը կատարելու պահին առկա չեն եղել նույն նորմի կիրառման համար անհրաժեշտ իրավական նախադրյալները, այն է՝ Վահե Դունոյանի կողմից 2-րդ անգամ ոչ սթափ վիճակում երթևեկելու արարքը կատարվել է ոչ թե Առաջին որոշումն ընդունելուն հաջորդող օրվանից սկսած մեկ տարվա ընթացքում, այլ՝ նույն օրը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Սույն գործով նկատի ունենալով, որ Վահե Դունոյանը հայցադիմումը ներկայացնելու համար վճարել է 10.000 ՀՀ դրամ (գ.թ. 16), վերաքննիչ բողոքի համար վճարել է 20.000 ՀՀ դրամ (գ.թ. 101), և վճռաբեկ բողոքի համար՝ 30.000 ՀՀ դրամ, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վահե Դունոյանի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիման վրա, ենթակա են հատուցման Ծառայության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.03.2026 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Վահե Դունոյանի հայցն ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ՆԳՆ

ոստիկանության պարեկային ծառայության 14.04.2025 թվականի թիվ 8259010510 որոշումը:

2. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունից հօգուտ Վահե Դունոյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես հայցի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ